

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Մարտի 26-ին՝ կիրակի, «Զատիկ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Օրվա մեծ տոնի առիթով ուխտավորների հոծ բազմությունը լցրել է Մայր տաճարն ու մայրավանքի շրջափակը։

Օրը գարնանային է, ջերմ ու պայծառ։

Առավոտյան ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով ու ամպհովանու տակ, հանդիսավորությամբ առաջնորդվում է Մայր տաճար՝ զատիկական հայրապետական սուրբ պատարագ մատուցելու։

Մայր տաճարը զարդարվել է տոնականորեն։ Ամեն կողմ խունկ ու աղոթքի մրմունջներ։

Մայր տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել Գերագույն հոգևոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի, «Էջմիածին» ամսագրի խմբագրական և ճեմարանի դասախոսական կազմի անդամները, վանքի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ։

Սուրբ պատարագի կոմիտասյան երգեցողությունը կատարում է Մայր տաճարի երգեցիկ խումբը։

Վեհ, հաղթական ու սրտառուչ հնչում են հարության տաղերն ու մեղեդիները՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» և «Գովեա՛ երուսաղէմ, զՏէր»։

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է Վեհափառ Հայրապետը։

Նույն օրը, երեկոյան ժամը 11.30-ին, Երևանի ռադիոկայանից ձայնասփռվում է Վեհափառ Հայրապետի զատիկական քարոզը։

Հավարտս ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է վեհարան՝ Գահասրահ, ուր ընդունում է շնորհավորություններ։

Հանուն Մայր Աթոռի միաբանության և բոլոր ներկաների, Վեհափառ Հայրապետի Զատիկը շնորհավորում է Մայր տաճարի լուսաբարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը։

Այնուհետև խոսք է առնում Հայոց Հայրապետը, շնորհավորում՝ հայ եկեղեցու և բովանդակ հայ ժողովրդի տոնը՝ Զատիկը, և օրհնելով աղքն ու եկեղեցին, ժողովուրդն ու հայրենիքը, բարեմաղթություններ է անում Մայր Աթոռ ս. Էջմիածնի, մեր նվիրապետական Աթոռների, թեմերի պայծառության, մայր հայրենիքի և հայ ժողովրդի բարօրության և համայն աշխարհի խաղաղության համար։

Բոլոր ներկաները աջահամբույրով շնորհավորում են Վեհափառ Հայրապետի Զատիկը։

Խմբովին երգված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում է զատիկական տոնի հանդիսությունը Մայր Աթոռում։